«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶՈՐԱՑՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Արմինե Սևումյան
ԱրՊՀ Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի 2 կուրսի մագիստրանտ
armine.sevumyan@mail.ru
Գիտ. ղեկ.՝ հ.գ.թ., դոց. Վ.Յարամիշյան

Արցախյան ազատագրական պատերազմը ԱՀ դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետևանքով ծագած զինված հակամարտությունն է 1988–1994-ին: 1994թ հրադադարի պայմանավորվածությունից հետո Արցախում, ինչպես հայտնի է, խաղաղ չի եղել:Կոպտորեն խախտելով 1994թ. մայիսի 12-ին ձեռք բերված կրակի դադարեցման եռակողմ (Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջանի Հանրապետություն-Հայաստանի Հանրապետություն) համաձայնագիրը և Ղարաբաղյան հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու միջազգային պարտավորվածությունները՝ ադրբեջանական կողմն ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, ժամը 3.00-ի սահմաններում նախահարձակ ռազմական գործողություններ սկսեց հակամարտ զորքերի սահմանագծի ողջ երկայնքով: Ծավալվեցին արյունահեղ մարտեր ամեն մի թիզ հողի համար: Ժամկետային զինծառայողներն իրենց հմտավարժ սպաների հրամանատարությամբ արիաբար կանգնեցին մինչև վերջ և հանդես բերեցին հերոսության անկրկնելի օրինակներ: Մարտական գործողություններն առավել թեժ էին ռազմաճակատի վերածված սահմանագծի հարավային՝ Հադրութի և հյուսիսային՝ Մարտակերտի ուղղություններում:

Նոր տեսակի բարձր տեխնոլոգիական զինատեսակներով ռազմագործողությունները, վերլուծաբաններին իրավամբ հիմք տվեցին քառօրյա պատերազմն անվանել թշնամու կողմից Արցախի դեմ մղված 6-րդ սերնդի պատերազմ:[1] Հայրենյաց պաշտպանների դիրքերում իրականացրած հմուտ, անձնազոհ և հերոսական գործողությունների շնորհիվ կասեցվեց հակառակորդի հետագա առաջխաղացումը, իսկ նրան օգնության հասած ռեզերվային ուժերի, այդ թվում նաև պահեստազորայինների ու կամավորականների և հրետանու ճշգրիտ հարվածների շնորհիվ հնարավոր դարձավ ձախողել Բաքվի ղեկավարության նենգ մտադրությունները:

Պատերազմական պայմաններում գտնվելուց հետո երիտասարդները քաղաքացիական միջավայր վերադառնալով հայտնվում է նրանում սոցիալ-հոգեբանորեն վերականգնվելու խնդրի առջև: Սա ենթադրում է խաղաղ կյանքին բնորոշ, սակայն խորթ դարձած վարքի ձևերի, գործունեության մոդելների վերականգնում: Պատերազմի մասնակցի հետպատերազմյան հոգեվիճակը բնորոշվում է որպես սահմանային՝ այսինքն, գտնվում է նորմայի և ախտաբանականի միջև: Անձի վրա պատերազմի թողած ներգործությունների ամբողջությունը հոգեբանական և հոգեբուժական գրականության մեջ բնորոշվում է որպես մարտական հոգեկան խեղում, իսկ ներկայումս մասնագիտական գրականության շրջանակներում առավել ընդունված է հետտրավմատիկ սթրեսային խանգարում տերմինը, որը բնութագրում է հոգեխոցիչ ազդեցությունների հետևանքները մարդու հոգեկանի վրա: Պատերազմը

[1] https://hy.wikipedia.org

դիտարկվում է որպես բազմաթիվ սթրեսորների ամբողջություն, որը հոգեկան խեղում է պատճառում մարտի մասնակցի հոգեկանին:

Համաձայն հիվանդությունների միջազգային դասակարգման հետպատերազմյան տրավմատիկ համախտանիշի հիմնական ախտանիշները հինգն են.

1. Հոգեկան խեղման պատճառը պետք է լինի այնպիսի մի անսովոր իրադարձություն, որը տվյալ անձի համար լինի ուժգին սթրեսոր:

2. Խեղիչ իրադարձության հետ կապված ծանր ապրումները պետք է պարբերաբար կրկնվեն, թարմանան գիտակցության մեջ:

3. Անձը պետք է կայուն կերպով ձգտի խուսափել այն ամենից, ինչը հիշեցնում է խեղիչ իրադարձության մասին, այն մոռանալու, չհիշելու ցանկություն ունենա:

4. Անձի մեջ պետք է նկատել դյուրագրգռություն, որը չկար մինչ հոգեկան խեղումը:[1]

Վերը նշված ախտանիշները անձի մեջ պետք է դրևորվեն հոգեկան խեղում ստանալուց մեկ ամսից ոչ շուտ:

Պատերազմական սթրեսորների բացասական ազդեցության հետևանքները բազմակողմանի են: Տուժում է անձի հոգեկան ու ֆիզիկական առողջությունը, խախտվում է հոգեբանական հավասարակշռվածությունը, աղավաղվում, փոփոխվում են պատերազմի մասնակցի աշխարհայցքը, արժեքային համակարգը: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը, լինելով մարտական պայմաններում մարտիկի հոգեկան տևական լարվածություն՝ սթրեսի հետևանք, արտահայտվում է. քնի խանգարումներով, հոգեպես կոտրված լինելու զգացողությամբ, հուզական բռնկումներով, անհաշտությամբ, ուշադրության կենտրոնացման դժվարություններով, հոգեկան հյուծվածությամբ, կոպտությամբ, դատողությունների կտրուկ, կատեգորիկ և անզիջում լինելով, կյանքից ու մարդկանցից հիասթափությամբ կամ նրանց հանդեպ անտարբերությամբ: Մարտական պայմաններում հայտնվելու առաջին իսկ օրվանից երիտասարդ զինծառայողի հոգեկանում սկսվում են հարմարվողական գործընթացներ: Այդ վիճակում գտնվող զինծառայողին բնորոշ են դառնում միջավայրի թշնամական ընկալումը, տագնապը, հմտությունների ավտոմատացումը, սպառնացող ազդակներին իմպուլսիվ պատասխանելու հակվածությունը: Հեպատերազմյան տրավմատիկ համախտանիշը կարող է հարբեցողության ու թմրամոլության պատժառ դառնալ: Մարտում զինծառայողներն ունենում են վախի վշտի, զզվանքի, մեղքի հուզական ուժեղ ապրումներ, որոնք էլ պատճառ են հանդիսանում նրանց հոգեկանի խեղմանը:

Տագնապ կամ ուժեղ վախ, որպես կանոն ապրում են դեռևս երիտասարդ զինծառայողները: Մարտական լարված պայմաններում երիտասարդ մարտիկի հոգեկանում վախը կարող է թույլ դրսևորվել, երբեմն էլ անհետանալ: Սակայն այն կարող է ի հայտ գալ սրվել, երբ անսպասելի վտանգ է առաջանում: Այս դեպքում վախը կատարում է հարմարվողական գործառույթ՝ ստիպելով մարդուն որոնել վտանգից պաշտպանվելու միջոցներ: Վտանգավոր պայմաններում վախի հարմարվողական գործառույթը կարող է ունենալ երկու դրսևորում. վախենալիս կարող են վերացնել վտանգի աղբյուրը՝ ագրեսիվ հարձակողական գործողություններով: Այդ իսկ պատճառով՝ վախից դրդված մարտիկը կարող է հերոսական արարք կատարել: Վախի հարմարվողական մյուս դրսևորումը վախի օբյեկտից խուսափելն է, ինչը մարտական պայմաններում դատապարտվում է,

1 Лобов В.Н. Военная хитрость. санкт-петербург, г. 2001, ст.242

քանզի այն հանգեցնում է պարտության և մարտիկի մեջ վախկոտության՝ որպես բնավորության գծի ձևավորմանը, որը միտված է դրսևորվելու մարդու վարքում ամեն անգամ, երբ նա հայտնվում է վտանգի պայմաններում:

Սակայն վախի աղբյուրից խուսափելը նույնպես չի կարելի միանշանակ բացասաբար որակել, քանզի այն երբեմն կարող է զերծ պահել մարտիկին ավելորդ արկածախնդրությունից: ապրիլյան պատերազմի երիտասարդները վերադարձան, սակայն նրանցից շատերն առայսօր չեն հարմարվում իրականությանը, նրանցից շատերը գտնվում են ոչ պատերազմ, ոչ խաղաղություն պայմաններում, ինչը բերում է սոցիալ-հոգեբանական դեզադապտացիայի: Երիտասարդ մասնակիցների մոտ կարելի է նկատել հուսահատություն, լքվածություն, մոռացվածություն, անօգնականության ու օտարվածության զգացողություն: Պատերազմի մասնակիցների մեջ սրվում են որոշ պահանջմունքներ՝ հատկապես անվտանգության, հարգանքի, հեղինակություն վայելելու, ինքնահաստատվելու, ինքնիրականացման պահանջմունքները: Պատերազմի երիտասարդ մասնակիցները հաղթանակի համար վտանգելով իրենց կյանքը, հասարակությունից ակնկալում են համարժեք վերաբերմունք: Երկիրը պաշտպանողը ցանկանում և պահանջում է, որ իրեն պատշաճ գնահատական տրվի՝ բարոյական, հոգևոր բավարարվածություն ստանալու համար: Ապրիլյան հետպատերազմյան տրավմատիկ համախտանիշին բնորոշ է կենդանի մնալու համար մեղքի զգացումը, մահացածների հետ նույնացումը: «Եթե զոհվածը մտերիմ մարդ է, ապա պատերազմի մասնակիցն իր կենդանի մնալու համար զոհվածի հարազատների և զոհվածի առջև կարող է ունենալ մեղքի զգացում»[1]:

Պատերազմի մասնակիցներից շատերի մոտ հետպատերազմյան տրավմատիկ ախտանիշների մեջ գերակշռող են խղճի խայթը, կարեկցանքն ու ապրումակցման հետ կապված վշտի, վրեժի զգացողությունները: Կարեկցանքը կապված է սեփական ժողովրդի կյանքի այն ողբերգական դրվագների հետ, որը նա ապրեց ապրիլյան պատերազմի ընթացքում: Բարոյական զարգացման մակարդակը նույնպես իր ազդեցությունն է գործում հետպատերազմյան վերականգնման գործընթացում: Հետպատերազմյան բարոյական ապրումները կարող են բնորոշվել վեհ գաղափարի համար զենք վերցրած մարտիկին, ում մեջ կարող է առաջանալ խղճի, մեղքի զգացում՝ պատերազմի ընթացքում հակառակորդի հանդեպ անհարկի դաժանություն ցուցաբերած լինելու պատճառով: Այս պարագայում պատերազմի մասնակիցը հասարակության կողմից արդարացվելու ցանկություն է ունենում: Բարոյական զարգացման ավելի ցածր մակարդակի տեր պատերազմի մասնակցի մեջ հետպատերազմյան տրավման կարող է դրսևորվել՝ կոպտության, ագրեսիվ վարքային մոդելների ձևով: Նման երիտասարդները իրենց ագրեսիվ վարքը զսպելու փորձ անգամ չեն անում:

Ապրիլյան պատերազմի երիտասարդների հարմարվելուն էապես խոչընդոտում է նյութապես ապահովված չլինելը: Միայն մի փոքր մասն է, որ գտնվում է նյութական բարեկեցության մեջ: Կարևոր դրույթ է նաև նյութապես ապահովված պատերազմի մասնակիցների կողմից աջակցությունը իրենց զինակից ընկերներին, այդ քայլով ոչ միայն թեթևացնում են նրանց նյութական խնդիրները, այլև պահպանում բարոյահոգեբանական առաողջ մթնոլորտը, ինչը կարող ենք համարել ազատամարտիկների հոգեկան վերականգնման կարևոր միջոց: Նոր խաղաղ պայմաններում հոգեբանորեն վերականգնվելուն օգնում է նաև ստեղծագործական գործունեությունը՝ անձի մեջ ձևավորված ագրեսիայի

[1] Ջամալյան Դ.Վ., «Ռազմական հոգեբանության հիմունքներ առաջին մաս», Երևան «Լինգվա» հրատ. 2008, էջ 250:

սուբլիմացումը գրական կամ այլ տեսակի ստեղծագործական ակտիվության մեջ: Երիտասարդների համար բարդ ու յուրահատուկ են վերահարմարման պրոբլեմները: Հայերիս մոտ ընտանիքը նյութապես ապահովելու հոգսը ավանդաբար դրված է տղամարդու վրա: Աշխատանք չունենալը, դրա որոնումները երիտասարդների պատկերացումներում ապագան դարձնում են անկախատեսելի: Աշխատանքով ապահոված լինելը բացի սոցիալական պրոբլեմների լուծումից կհանգեցնի նրանց օրը ճիշտ կազմակերպելուն և կնպաստի ոչ միայն նրանց ինտեգրմանը հասարակության մեջ, այլև առողջ հարմարման գործընթացը: Այս ձևով կբարձրանա մասնակիցների սոցիալական դիրքը՝ ինչպես նաև ինքնագնահատականը, կհաղթահարվի լքվածության, մոռացության մատնված լինելու զգացողությունը: Պատերազմի երիտասարդ մասնակիցները խաղաղ կյանքում ինտեգրվելու, հասարակության լիարժեք անդամ զգալու համար անհրաժեշտ է որպեսզի լինեն անընդհատ շփումների մեջ, ստեղծեն նոր սոցիալական կապեր, ստեղծագործական ակտիվության միջոցով ինքնարտահայտվեն, հաջողություններ ունենան և ինքնահաստատվեն: Փոփոխված իրականությանը հարմարվելու համար մարդուց հոգեկան եռանդ է պահանջվում, քանի որ պատերազմը՝ ենթադրում է այլ գործելակերպ, իսկ խաղաղությունը՝ այլ:

Այսպիսով խաղաղ պայմաններին սոցիալ-հոգեբանորեն վերահարմարվելու համար պատերազմի երիտասարդ մասնակիցները ունեն մասնագիտական հոգեբանական օգնության կարիք Երիտասարդների հետպատերազմյան վերականգնումը թե՝ պետության, թե՝ հասարակության հրատապ խնդիրներից է, քանի որ Արցախյան պատերազմը հայրենի հողում էր, նպատակները հստակ էին, հետևաբար կարող ենք ենթադրել, որ պատերազմի նպատակի հստակ գիտակցումը հետպատերազմյան տրավմատիկ համախտանիշը մեղմող գործոն է:

Արմինե Սևումյան

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶՈՐԱՑՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Բանալի բառեր՝ *սոցիալ-հոգեբանական վերականգնում, հետպատերազմյան տրավմատիկ համախտանիշ, պատերազմական սթրեսոր, հուզական բռնկում, տագնապ, նույնականացում*

Ապրիլյան պատերազմին մասնակցած երիտասարդ համալրման հետպատերազմյան վերականգնումը համարվում է թե՝ պետության, թե՝ հասարակության հրատապ խնդիրներից մեկը: Հոդվածում քննարկվում է մարտական գործողություններին մասնակցած երիտասարդների սոցիալ-հոգեբանական վերականգնման խնդիրները: Պատերազմի երիտասարդ մասնակիցներն ունեն մասնագիտական հոգեբանական աջակցության կարիք՝ ինչից էլ հետևում է, որ հոգեբանական ծառայությունը պետք է լինի այն հենարանը, այն հաստատությունը, որը պատերազմի մասնակիցներին կօգնի վերգտնել իրենց և հոգեբանորեն լիարժեք կյանքով ապրել, հարմարվել «վտանգավոր» խաղաղությանը և ապրել երկրի անընդհատ զարգացող և պատերազմական գոտում լինելու դժվարին և անբարենպաստ պայմաններին:

Армине Севумян

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ РЕАБИЛИТАЦИЯ МОЛОДЫХ ЛЮДЕЙ, УЧАСТВУЮЩИХ В АПРЕЛЬСКОЙ ВОЙНЕ ПОСЛЕ ДЕМОБИЛИЗАЦИИ

Ключевые слова: *социально-психологическая реабилитация, послевоенный травматический синдром, воинственный стресс, эмоциональная вспышка, тревога, идентификация*

Послевоенная реабелитация молодых людей, участвующих в апрельской войне, считается одной из актуальных проблем государства и общества. В статье обсуждается социально-психологическая реабилитация молодежи, участвующей в боевых действиях. Молодые участники войны нуждаются в профессиональной психологической поддержке, из чего следует, что психологическая служба должна быть той опорой, учреждением, которое поможет ветеранам войны вновь обрести себя и жить психологически полноценной жизнью, адаптироваться к «опасной» мирной жизни и жить в постоянно развивающейся раздираемой войной зоне страны.

Armine Sevumyan

THE RESTORATION OF THE YOUNG PEOPLE'S RECRUITMENT WHO PARTICIPATED IN THE APRIL'S WAR AFTER THE DEMOBILIZATION

Key words: *social-psychological rehabilitation, post-war traumatic syndrome, military stress, emotional fever, anxiety, identification*

The restoration of the young people's recruitment who participated in the April's war is considered one of the urgent problems both of the society and republic .The restoration of social-psychological problems of the young participants of military operation are discussed in this article.

The young participants of the war need professional psychological aid from which it follows that psychological service should be the support which will help the participants of war to renovate themselves, to enjoy their life psychologically, to get adapted to the dangerous peace, to live in a constantly developing and conflict zone country and to adopt to its difficult and unfavourable conditions.